ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 նոյեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

156
(2822)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ԳԵՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Սեպտեմբերի 21-ից սկսած՝ ոչ միայն Արցախը հայաթափվեց, այլեւ, սեպտեմբերի 27-ից սկսած, զանգվածային ձերբակալություններ արեց Ադրբեջանը: Մասնավորապես՝ ադրբեջանական մեկուսարաններում հայտնվեցին Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ՊԲ նախկին հրամանատարի առաջին տեղակալ Դավիթ Մանուկյանը, Արցախի ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը: Հոկտեմբերի 4-ից սկսած՝ ադրբեջանական մամուլը սկսեց տարածել լուսանկարներ, տեսանյութեր նաեւ գերեվարված նախագահների՝ Բակո Սահակյանի, Արայիկ Հարությունյանի, Արկադի Ղուկասյանի մասնակցությամբ: Բացի այդ, հարյուրավոր խաղաղ բնակիչներ, զինծառայողներ, պատերազմի մասնակիցներ այսօր Ադրբեջանում գերեվարության մեջ են: Ի՞նչ է անում ՀՀ նախագահը հայ գերիներին ՀՀ վերադարձնելու ուղղությամբ: «Արտաքին քաղաքականության բնագավառում Հանրապետության նախագահի լիազորություններն ամրագրված են Սահմանադրությամբ: Ձեր գրության մեջ արծարծված հարցերը վերաբերելի չեն Հանրապետության նախագահի՝ Սահմանադրությամբ սահմանված լիազորություններին եւ գործառույթներին»,- «Ժողովուրդ» օրաթերթի հարցին ի պաստասխան՝ գրել են ՀՀ նախագահի նստավայրից: ՀՀ վարչապետի աշխատակազմից էլ մեր հարցումներն ուղղորդել են ՀՀ ԱԳՆ: Իսկ ի՞նչ է անում ՀՀ ԱԳՆ-ն հայ գերիների վերադարձի ուղղությամբ. «Ադրբեջանի կողմից ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների եւ պատանդառված անձանց, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի ռազմաքաղաքական ղեկավարության վերադարձի հարցը մշտապես գտնվում է ՀՀ ԱԳՆ ուշադրության կենտրոնում: Ձեռնարկվում են բոլոր հնարավոր քայլերն ապօրինաբար ձերբակալված ԼՂ ներկայացուցիչների իրավունքները միջազգային, այդ թվում՝ դատական ատյաններում պաշտպանելու համար: ՀՀ ԱԳՆ-ն ամենօրյա կապ է պահպանում եւ պարբերաբար հանդիպումներ ունենում միջազգային մի շարք կառույցների, այդ թվում՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան պատվիրակության հետ»: Անդրադառնալով գործուն քայլերին՝ ԱԳՆ-ից հայտնել են, որ հոկտեմբերի 20-ին ԿԽՄԿ ներկայացուցիչներն այցելել են Ադրբեջանում գերության մեջ գտնվող ԼՂ ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչներին: «Միեւնույն ժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ խնդիրը մշտապես բարձրաձայնվում է ինչպես ադրբեջանական կողմի հետ, այնպես էլ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակներում գործընկերների մասնակցությամբ հանդիպումների ժամանակ»,- եզրափակել են ԱԳՆ-ից:

Արցախի Հանրապետությունը Ադրբեջանի մաս ճանաչելուց, Արցախը Ադրբեջանին հանձնելուց եւ հայաթափելուց հետո Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հետեւողական ջանքերով փորձում է վերացնել Արցախի պետականության ատրիբուտները նաեւ հետին թվով: Հիմա էլ որոշել են Արցախի նախագահի հրամանագրերի ճիշտն ու սխալը որոշել: Ինչպես՝ բացատրենք. ԱԺ ՔՊ-ական պատգամավորներից մեկը՝ Վիլեն Գաբրիելյանը, հոկտեմբերի 30-ին՝ բյուջետային քննարկումների ժամանակ, բարձրացրեց Արցախի նախագահի կողմից պարգեւատրված զենքերի հարցը: «Արցախի Հանրապետության նախագահի կողմից պարգեւատրումների մասով, անկախ նրանից՝ այդ մարդը հանդիսացել է Արցախի Հանրապետության, թե Հայաստանի Հանրապետության քաղաքացի, անկախ իր ով լինելուց եւ կարգավիճակից, մենք շատ լրջագույն պետք է ուսումնասիրենք թե՛ իրավական հիմքերը, թե՛ պատճառները՝ ինչի համար են այդ մարդիկ պարգեւատրվել»,- լուրջ դեմքով հայտարարեց Վիլեն Գաբրիելյանը: Այսինքն՝ ԱԺ պատգամավորը որոշել է քննել հայկական երկրորդ հանրապետության բնակիչների կողմից լեգիտիմ ընտրություններով ընտրված նախագահի (նախագահների) կարգադրությունները: Այս հանդգնությունն ունի թերեւս մեկ պատճառ. Վիլեն Գաբրիելյանը նեղսրտած է, որ չի կարողացել զենքի պարգեւատրման արժանանալ: Կհարցնեք՝ ով է Վիլեն Գաբրիելյանը. այո, «Ֆեյսբուք»-ում ստատուսներ գրող Նավակ Ճոճողը, որը 33 տարեկան հասակում է 2 տարի ծառայել հայկական զինված ուժերում: Նա թեեւ ունի դեղագետի կրթություն, սակայն 11 տարի գործազուրկ է եղել: Հեղափոխություն եղավ, եւ նա սկսեց ստաբիլ աշխատանք ունենալ, թեեւ վերցրած պարտքերը դեռ ամբողջությամբ չի մարել: Այս որակի մարդը ցանկանում է քննել երկրի նախագահների կագադրությունները:

Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի հետեւանքով բռնի տեղահանված արցախցի պատգամավորները Արցախի ԱԺ նիստ հրավիրելու վերաբերյալ քննարկումներ են սկսել: «Ժողովուրդ» օրաթերթը Արցախի ԱԺ «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության պատգամավոր Արամայիս Աղաբեկյանից հետաքրքրվել է՝ արդյոք պատրաստվում են Արցախի ինքնորոշման հարց բարձրացնել կամ որեւէ հայտարարություն ընդունել այդ նիստի ժամանակ: «Նիստի մասին քննարկում կա, այո, բայց ոչ միայն ինքնորոշման մասին, խնդիրը միայն դա չէ: Արցախի Ազգային ժողովը լուծարված չէ, այն պե՞տք է ինչ-որ գործունեություն ծավալի, թե՞ ոչ: Միայն ինքնորոշման հարց չէ, նաեւ մեր հետագա քայլերի, ճակատագիրը, ի՞նչ է լինելու հետո, ի՞նչ ենք անելու. այս բոլոր հարցերը պետք է քննարկենք», -ասաց Աղաբեկյանը՝ չցանկանալով փակագծեր բացել: Աղաբեկյանից հետաքրքրվեցինք՝ կապ հաստատել են արդյոք ԱԺ փոխնախագահ Գագիկ Բաղունցի հետ, որպեսզի նա նիստ հրավիրելու նախաձեռնությանն ընթացք տա. «Մինչ այսօր չի հաջողվել նրա հետ կապ հաստատել»:

ՔՊ-ում ակտիվ խմորումներ են: Անցնող ողջ շաբաթ իշխող ուժը, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, նիստեր է արել՝ թե՛ վարչության, թե՛ նախաձեռնող խմբի: Իսկ մինչ այս ՔՊ-ում կուսակցական կյանքը կանգ էր առել, ու գրեթե մեկ ամիս նիստեր չէին եղել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ նիստերը թեժ են անցնում, հատկապես՝ հինգշաբթի օրը տեղի ունեցած նախաձեռնող խմբի նիստը, որի ժամանակ հավաքվել էր իշխանական վերնախավը՝ եւ պատգամավորները, եւ նախարարները՝ Արարատ Միրզոյանը, Անահիտ Ավանեսյանը, ՊՎԾ ղեկավար Ռոմանոս Պետրոսյանը, ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը եւ այլք: Այդ օրը քննարկվել են արտաքին քաղաքական հարցեր: Նախ Նիկոլ Փաշինյանն է երկար ելույթ ունեցել ու խոսել սպասվող հանդիպումներից, Ադրբեջանի հետ բանակցություններից եւ հայ-թուրքական հարաբերություններից, այնուհետեւ ՔՊ-ականներն են հարցեր ուղղել Փաշինյանին: Վարչության նեղ կազմով նիստերին ՔՊ-ականները քննարկել են բացառապես ներքաղաքական հարցեր: Ավելի վաղ գրել էինք, որ ՔՊ-ականները մտադիր են պաշտոնանկ անել Ալավերդու ընդդիմադիր համայնքապետին, պատժել Վարդենիսի ավագանու ընդդիմադիր անդամներին. այս հարցը եւս քննարկվել է վարչության նիստերին:

ԶՐՈՒՅՑ

Ո՞Վ Է ՈՒՂՂՈՐԴԵԼ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Օրեր առաջ հայտնի դարձավ, որ իրավապահ մարմինները բերման են ենթարկել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին թաղապետ, ՔՊական Արման Բարխուդարյանին, կոմունալ բաժնի պետ Աշոտ Խաչատրյանին, առեւտրի բաժնի պետ Հրայր Արամյանին եւ կոմունալի աշխատակից Վան Հարությունյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ համայնքապետարանը գնումների գործընթացը լիակատար չի կատարել, չարաշահումներ են հայտնաբերվել, այսինքն՝ հայտարարվել է մրցույթ, որից հետո նախատեսված գումարն իր նպատակին չի ծառայել, այդ գումարի մի մասը, այսպես ասած, մեջ-մեջ է արվել:

Ըստ տեղեկությունների՝ կասկածյալների ցանկում է նաեւ Մալաթիա-Սեբասիա վարչական շրջանի նախկին թաղապետ Սաշա Կատվալյանը, որն այժմ զբաղեցնում է Երեւանի քաղաքապետի խորհրդականի պաշտոնը:

«Ժողովուրդ» օրաթերթը Սաշա Կատվալյանից փորձեց ճշտել, թե արդյոք ինքը չի հանդիսանում այս կծիկի մաս:

-Պարոն Կատվալյան, Ձեզ իրավապահ մարմինները հրավիրե՞լ են հարցաքննության կամ արդյոք արդեն հարցաքննվե՞լ եք:

-Ես որեւէ առնչություն չունեմ հարուցված գործի հետ, եւ իրավապահ մարմիններն ինձ չեն կանչել հարցաքննության: Հարուցված գործը, իմ տեղեկություններով, առնչվում է այս տարվան ու բացարձակ կապ չի կարող ունենալ իմ հետ, քանի որ ես նախորդ տարվանից դուրս եմ եկել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատանքից:

-Պարոն Կատվալյան, չնայած նրան, որ Դուք մեկ տարի առաջ դադարեցրել եք Ձեր գործունեությունը՝ որպես վարչական շրջանի ղեկավար, ըստ թաղապետարանում տարածված խոսակցությունների, Դուք եք ներքին կարգով ուղղորդել, թե Բարխուդարյանը ինչպես ղեկավարի եւ ինչ գործընթացներ կազմակերպի, այսինքն՝ փաստացի Դուք եք ղեկավարել՝ ըստ այդ խոսակցությունների: Դա էլ հիմք կարող է հանդիսանալ, որ Ձեզ հրավիրեն հարցաքննության: Այս մասին ի՞նչ կասեք:

-Եթե վարչական շրջանի ղեկավարն իմ ընկերն է, ու ես՝ որպես խորհրդական, տարբեր հարցերով օգնել եմ, դա չի նշանակում, որ ես ուղղորդել եմ: Ես տարբեր վարչական շրջանների հարցերով էլ զբաղվել եմ, ու դա ուղղորդում չէ. դա աշխատանքային ու գործընկերային աջակցություն է:

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԸ

ՀԱՃՈՅԱՆՈՒՄ Է

ՆԱԽԱՐԱՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՆԻՍՏԻՆ

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը կարծես թե անցել է ակտիվ կուսակցական գործունեության:

Նա երեկ մասնակցել է ՔՊ նիստին, որտեղ քննարկվել են արտաքին քաղաքական հարցեր, եւ հարցեր է հնչեցրել Նիկոլ Փաշինյանին: ՔՊ տարածած լուսանկարների մեջ երեւում է Ավանեսյանի ակտիվությունը:

Նման ակտիվությունը պատահական չէ. որքան շատ է խոսվում Անահիտ Ավանեսյանից վարչապետի դժգոհության ու նրան պաշտոնանկ անելու մտադրության մասին, այնքան տիկին նախարարը ավելի ակտիվ կուսակցական գործունեություն է ծավալում:

Տեսակետ կա, որ նա ակտիվ կուսակցական գործունեության մեջ է փորձում մտնել, որպեսզի ամեն կերպ պահպանի իր աթոռը եւ չեղարկի պաշտոնանկությունը: Այլապես անհասկանալի է, թե ապաքաղաքական ոլորտի նախարարն ինչո՞ւ է որոշել կուսակցական գործունեությամբ զբաղվել, այն էլ՝ մի դեպքում, երբ իր ոլորտում լուրջ խնդիրներ կան:

Մասնագիտությամբ իրավաբան նախարարն անգամ իրավական դաշտում է պարտվում. ժամանակին աշխատանքից ազատել էր նախարարության ենթակայության տակ գտնվող կառույցների ղեկավարների, որոնք հետո դատարանի որոշմամբ վերականգնվել էին:

Օրերս ԱԺ-ում, մեր թղթակցի հարցին ի պատասխան, խոսելով իրենից վարչապետի դժգոհության մասին, Ավանեսյանն ասել էր, թե վարչապետի ելույթն այլ բանի մասին է վկայում: Մինչդեռ, Նիկոլ Փաշինյանն ամեն անգամ առողջապահության ոլորտի մասին խոսելիս այնտեղ տեղի ունեցած ըստ իրենց բարեփոխումներն ու արվող քայլերը, բուժկենտրոնների վերանորոգումն ու շինարարությունը միշտ վերագրում է իրեն, բայց ոչ նախարարությանն ու նախարարին:

Վերադառնանք Անահիտ Ավանեսյանի կուսակցական գործունեությանը.

կառավարության կայքում վերջերս թարմացվել է նրա կենսագրությունը, ու պարզում ենք, որ 2022 թվականից անդամակցում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը: Եվ սա էլ կրկին հաստատում է տեսակետը, որ 2018թ.՝ փոխնախարարի, այնուհետեւ՝ 2021թ., նախարարի պաշտոնը զբաղեցնող Ավանեսյանն իր նախարարարական պորտֆելը պահելու համար է որոշել կուսակցական դառնալ, ու դեռ ավելին՝ ակտիվ կուսակցական գործունեություն ծավալել:

Ի դեպ, հետաքրքիրն այն է, որ 2021թ. ԱԺ ընտրություններին նա ՔՊ ցուցակում էր, եւ պարզվում է՝ այնտեղ նրա անվան դիմաց, որպես կուսակցական պատկանելիություն, նշված է եղել ՔՊ, մինչդեռ կառավարության կայքից տեղեկանում ենք, որ նա ՔՊ-ական է դարձել 2022թ.-ին:Հետաքրքիր է՝ երկու պաշտոնական տեղեկություններից որն է ճիշտ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Աշտարակի՝ ՔՊ-ի «սրտի քաղաքապետ» Թովմաս Շահվերդյանի մասնակցությամբ աղմկահարույց կրակոցների գործով հետաքրքիր զարգացումներ են եղել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ քաղաքապետ Թովմաս Շահվերդյանի տեղակալի վրա կրակած անձին դատարանը չի կալանավորել: ArmLur.am-ը գրել էր, որ հոկտեմբերի 20-ին հայտնի դարձավ, որ Արագածոտնի մարզի «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրից դեպի «Գալուստի ձոր» կոչվող հանգստյան գոտի կրակոցներ են հնչել, ինչի հետեւանքով Աշտարակի քաղաքապետի տեղակալին վիրավորում ստացած տարել էին հիվանդանոց: Ավելի ուշ shamshyan.com-ը գրեց, որ իրավապահները տեղի ունեցած միջադեպի գործով ձերբակալել են Ուշան համայնքի ղեկավար, 28-ամյա Գրիգոր Հարությունյանին, «Ես եւ նա» ՍՊԸ տնօրեն, Ազգային ժողովի նախկին պատգամավոր, Արագածոտնի նախկին մարզպետ Սարգիս Սահակյանի եղբորը՝ 54-ամյա Նաիրի Սահակյանին, Ուշի համայնքի ղեկավար, 45-ամյա Մարտին Մարտիրոսյանին եւ այլոց: Հիմա այն մասին, թե կոնկրետ ինչ է կատարվել: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրի սեփականատերը վերոնշյալ հատվածում՝ հողի վրա, աշխատանքներ է իրականացրել, եւ նշված հասցե է եկել Աշտարակի քաղաքապետ, ՔՊ թիմակից դարձած նախկին ՀՀԿ-ամերձ Թովմաս Շահվերդյանը ու սկսել վիճել նրանց հետ տարածքի հողի մասով, իր առարկությունները ներկայացրել, որից հետո հեռացել է: Նրա հեռանալուց հետո դեպքի վայր են հասել ոստիկանները, քանի որ օպերատիվ տվյալներ են ստացել, որ նշված հասցեում «մարտաֆիլմ կինո» է լինելու: Այնուհետեւ դեպքի վայր է եկել մոտ 40-հոգանոց խումբ ու սկսել քարերով, բահերով դաժան ծեծի ենթարկել ռեստորանի տիրոջը: Անգամ ոստիկանների ներկայությունը չի սաստել խմբի անդամներին՝ դադարեցնելու «մարտաֆիլմը»: Այս իրավիճակը տեսնելով՝ ռեստորանի տիրոջ տղան հանել է ավտոմատը ու կրակել, որպեսզի սաստի ներկաներին, եւ կրակոցներից վիրավորվել են Աշտարակի քաղաքապետի տեղակալն ու եւս մեկ անձ: Իրավապահ համակարգում քննությունը շարունակվում է, եւ ենթադրություններ կան, որ միգուցե քաղաքապետ Թովմաս Շահվերդյանն է այս խմբին ուղարկել ռեստորանի տիրոջ դեմ: Դատական համակարգն էլ, ըստ էության, ուսումնասիրելով նախաքննական մարմնի միջնորդությունը, հասկացել է, որ ռեստորանի սեփականատիրոջ որդին 40-հոգանոց խմբի ճիրաններից հորը փրկելու համար է կրակել: Այսինքն՝ իրական մեղավորներին այլ տեղ պետք է փնտրել. տեսնենք՝ ինչ է սպասվում քաղաքապետին ու իր թիմակիցներին: Նշենք, որ գործով մեղադրյալ անցնում են եւ հոկտեմբերի 24-ի դրությամբ տնային կալանքի տակ են ԱԺ նախկին պատգամավոր Նաիրի Սահակյանը, Ուշան եւ Ուշի համայնքի ղեկավարները:

Ո՞Վ Է ՆԱԽԿԻՆ ԹԱՂԱՊԵՏԸ

Ինչպես հայտնի դարձավ, ԱԱԾ-ն բերման է ենթարկել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին թաղապետ, ՔՊ-ական Արման Բարխուդարյանին եւ թաղապետարանի մի քանի աշխատակիցների: Նրանք, նախնական տվյալներով, մեղադրվում են խոշոր չափերի յուրացման համար:

Արման Բարխուդարյանը տարբեր ժամանակներում տարբեր պաշտոններ է զբաղեցրել: Մինչ վարչական շրջանի ղեկավար նշանակվելը նա ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանի խորհրդականն էր, իսկ դրանից առաջ՝ 2019-2020 թթ., այդ ժամանակ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակի՝ մարդասիրական օգնության ծրագրերի վարչության պետն էր:

Բարխուդարյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքային կառույցի խորհրդի անդամ է, որը հայտնի է ընտրակեղծարարությունների դիմելու իր հակումով:

Դեռեւս հուլիսին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Մալաթիայում ՔՊ-ն թեւերի է բաժանված եղել. մի թեւն ուղղորդվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի կողմից, մյուս թեւը՝ ՔՊ-ական պատգամավոր, վարչապետի տիկնոջ ազգական, Մալաթիա-Սեբաստիայի տարածքային կառույցի խորհրդի նախագահ Էդգար Հակոբյանի կողմից: ՔՊ տարածքային կառույցի խորհրդի նախագահի եւ անդամների ընտրությունների ժամանակ կողմերը իրենց ցանկալի մարդկանց ցուցակներ են տվել շարքային ՔՊ-ականներին, որպեսզի ընտրեն, եւ այդ կեղծիքը պատահաբար բացահայտվել է. պատգամավոր Էդգար Հակոբյանն իր համար էր ցանկալի ցուցակ տվել, իսկ թաղապետ Բարխուդարյանը՝ իր: Ու երբ բացահայտվել էին կեղծիքները վերստուգիչ հանձնաժողովի անդամների կողմից, որոշվել էր կասեցնել կուսակցության գրասենյակի գործունեությունը մինչեւ տարածքային կառույցի խորհրդի նախագահի եւ անդամների նոր ընտրությունները ավելի հարթ պայմաններում:

ՔՊ-ական նախկին թաղապետ Արման Բարխուդարյանը հայտնի է սկանդալային վարքագծով:

Մեր տեղեկություններով՝ նա գրեթե մշտապես կոնֆլիկտներ է ունեցել իր աշխատակիցների, ինչպես նաեւ իշխանության տարբեր ներկայացուցիչների հետ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՈԴԻՍԱԿԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՊԵՐԸ

Իրավապահ մարմինները բերման են ենթարկել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին թաղապետ, ՔՊ-ական Արման Բարխուդարյանին, կոմունալ բաժնի պետ Աշոտ Խաչատրյանին, առեւտրի բաժնի պետ Հրայր Արամյանին եւ կոմունալի աշխատակից Վան Հարությունյանին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հաջորդը լինելու է Սաշա Կատվալյանը, որը Երեւանի ներկայիս քաղաքապետ Տիգրան Ավինյանի մտերիմն է. նա եւս կասկածյալների ցանկում է:

Իսկ ո՞վ է Սաշա Կատվալյանը:

Կատվալյանը նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի հրամանով նշանակվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար դեռեւս 2022 թվականի մարտի 2-ից: Իբրեւ թե ամեն ինչ հարթ էր գնում, այն էլ տեղի ունեցավ Եռաբլուրի աղմկահարույց դեպքը: Շուրջ 8 ամիս ղեկավարած Կատվալյանը հոկտեմբեր ամսին, սեփական դիմումի հիման վրա, ազատվեց աշխատանքից՝ չասելով իր՝ աշխատանքից հեռանալու պատճառների մասին:

Ավելի ուշ մամուլը գրել էր, որ Սաշա Կատվալյանը ներքին խնդիրներ է ունեցել կառավարող կուսակցության հետ, եւ դրա պատճառը նրա՝ սեպտեմբերի 21-ի գրառումն է:

Մասնավորապես՝ սեպտեմբերի 21-ին, երբ 44-օրյա պատերազմում նահատակված զինծառայողների ծնողներն արգելեցին իշխանությունների ու անձամբ Նիկոլ Փաշինյանի մուտքը «Եռաբլուր» զինվորական պանթեոն, անմարդկային դաժանությամբ զոհվածների ծնողներին ու հատկապես մայրերին սկսեցին գետնին քարշ տալով տարածքից հեռացնել կարմիրբերետավորները, որպեսզի բացեն Նիկոլ Փաշինյանի ու նրա կառավարության ճանապարհը:

Այդ օրը կառավարող թիմից միայն Սաշա Կատվալյանը դատապարտեց տեղի ունեցածը:

«Եռաբլուրում որեւէ ակցիայի իրականացումը երբեւէ չեմ ընդունել ու չեմ ընդունի: Եռաբլուրը քաղաքական խաղերի, կոչերի ու բողոքի վայր չի եղել ու չպիտի լինի: Այսօր ոստիկանական ուժերը գործել են առնվազն ոչ պրոֆեսիոնալ եւ շատ վատ ձեւով բերման են ենթարկել զոհվածների մայրերին: Որպես արցախյան պատերազմում զոհվածի որդի եմ ասում՝ ոստիկանության գործելաոճը սխալ էր ու դատապարտելի: Տղե՛րք, կարմիր գծեր կան, որ չպետք է անցնել»,- ֆեյսբուքյան իր էջում գրել էր նա:

Հավելենք՝ «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ Կատվալյանն ու երեկ բերման ենթարկված Արման Բարխուդարյանը եւս մտերիմներ են եւ առանց մեկը մյուսի գիտության քայլեր չեն անում:

Նշենք նաեւ, որ Սաշա Կատվալյանն այժմ զբաղեցնում է Երեւանի քաղաքապետի խորհրդականի պաշտոնը:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅՏՆԻ Է ՕՐԱԿԱՐԳԸ

Հայաստան այցի ընթացքում ԳԴՀ արտգործնախարար Անալենա Բերբոքը կհանդիպի ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանի հետ:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Հայաստանում Գերմանիայի դեսպանության տարածած հաղորդագրությունից, որի մեջ նաեւ նշված է, որ Բերբոքը կայցելի նաեւ Եվրամիության դիտորդական առաքելություն եւ Լեռնային Ղարաբաղից փախստականների ընդունման կենտրոն:

«Գերմանիան հանդես է գալիս կայուն խաղաղության, տարածաշրջանի քաղաքական եւ տնտեսական դիվերսիֆիկացման եւ Եվրոպայի հետ սերտ ու լավ հարաբերությունների օգտին: Տարածաշրջանում վստահության ձեւավորումը եւ հաշտության հաստատումը շատ կարեւոր է: Գլխավոր նպատակը բանակցային, համապարփակ խաղաղ լուծումն է, որպեսզի հայերն ու ադրբեջանցիները կարողանան ապրել խաղաղ եւ անվտանգ իրենց ազգային սահմաններում: Մենք աջակցում ենք Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ եռակողմ բանակցությունների շուտափույթ վերսկսմանը»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՀԱՆԴԻՊԵՑ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը Թել Ավիվում հանդիպել է Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի հետ. այս մասին հաղորդում են իսրայելական լրատվամիջոցները:

Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն եւ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը հանդիպում են Թել Ավիվում վերջինիս՝ Իսրայել վայրէջք կատարելուց մոտ երկու ժամ անց:

Ինչպես Բլինքենը գրել է իր սոցիալական ցանցերից մեկում, Նեթանյահուի եւ «կառավարության այլ առաջնորդների» հետ հանդիպմանը նրանք կքննարկեն Իսրայելի ինքնապաշտպանության իրավունքը, ինչպես նաեւ Գազայի հատվածում խաղաղ բնակիչներին մարդասիրական օգնություն տրամադրելու ԱՄՆ-ի աշխատանքը: Պաղեստինա-իսրայելական հակամարտության սրումից հետո սա Բլինքենի երկրորդ այցն է Իսրայել: ԱՄՆ պետքարտուղարի վերջին հանդիպումը Իսրայելի վարչապետի հետ տեղի է ունեցել հոկտեմբերի 12-ին Իսրայելի պաշտպանության նախարարության կենտրոնակայանում:

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Երեւանում տեղի է ունեցել ԵԱՏՄ անդամ պետությունների իրավասու մարմինների ղեկավարների եւ ԵՏՀ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) «5+1» ձեւաչափով հերթական նիստը, որին մասնակցել են Ռուսաստանի, Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի հակամենաշնորհային/մրցակցային մարմինների ղեկավարները: Այս մասին տեղեկացնում են Հայաստանի մրցակցության պաշտպանության հանձնաժողովից:

ԱՐՏԱԿԱՐԳ

ԵՐԵՔ ԱՆՁԻ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԱՌԱՋԱԴՐՎԵՑ

Հոկտեմբերի 29-ի գիշերը մարտաֆիլմ հիշեցնող միջադեպ էր եղել Թբիլիսյան խճուղում՝ «Գազպրոմի» ճանապարհին:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մեկ մեքենա վթարի է ենթարկվել, դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ բախվել սյանը: Վթարված մեքենայում գտնվող անձանց օգնության են հասել Պարեկային ծառայության աշխատակիցները:

Մեզ հայտնի դարձավ, որ դեպքի վայրում է եղել ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ վթարված մեքենայում գտնվող անձանց հարազատները ծննդյան արարողությունից վերադառնալիս են եղել, որը նշվել է Աբովյան քաղաքի «Լուսաբաց» ռեստորանում: Նրանք անադեկվատ վիճակում են եղել եւ դեպքի վայրում հարձակվել են պարեկների, շտապօգնության բժիշկների եւ Գագիկ Շամշյանի վրա: Փորձել են խլել լրագրողի տեսախցիկը, քանի որ վերջինս լուսանկարել է իրավիճակը: Հարվածներ են հասցրել շտապօգնության բժիշկներին, ապտակել են կին պարեկին:

Ականատեսների խոսքով՝ բոլորը միայն աջ ու ձախ հարվածում էին իրար, ու ճանապարհը կաթվածահար վիճակում էր: Եվ, ահա, մեզ հայտնի դարձավ, որ Թբիլիսյան խճուղում ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի, պարեկների, շտապօգնության բժիշկների հարձակման գործով երեք անձի մեղադրանք է առաջադրվել:

ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնական հաղորդագրություն տարածեց:

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում իրականացված քննությամբ պարզվել են մի խումբ անձանց կողմից պարեկային ծառայության աշխատակիցների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու եւ խուլիգանություն կատարելու դեպքի մի շարք հանգամանքներ:



2023թ. հոկտեմբերի 28-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արաբկիրի բաժին զեկուցագիր է ներկայացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Թբիլիսյան խճուղում ծառայություն իրականացնող պարեկային ծառայության կարգախմբերից մեկին անհրաժեշտ է օգնություն:

Կանչով նշված հասցե մեկնած պարեկները տեղում նկատել են ավտովթարի հետեւանքով հավաքված մարդկանց խումբ, որոնցից մի քանիսը դրսեւորել են ոչ ադեկվատ, բացահայտ անհարգալից վերաբերմունք ինչպես տեղում հավաքված քաղաքացիների, այնպես էլ ոստիկանության ծառայողների նկատմամբ: Դեպքի վայրից ոստիկանության բաժին է տեղափոխվել մի կին եւ 2 տղամարդ:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 5-րդ կետերով, 452-րդ հոդվածի 3-րդ մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում պարզվել է նշված երեք անձանց ինքնությունը: Վերջիններս Կոտայքի մարզի Քանաքեռավանի բնակիչներ են՝ երկու եղբայր եւ քույր: Հանցավոր արարքներ կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածանքի հիման վրա՝ նրանք ձերբակալվել են:

Քննությամբ փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ գտնվելով Երեւան քաղաքի Թբիլիսյան խճուղում իրենց ազգականի կողմից տեղի ունեցած ինքնավթարի դեպքի վայրում եւ տեսնելով ահազանգի հիման վրա դեպքի վայր ժամանած շտապօգնության, ինչպես նաեւ ոստիկանության աշխատակիցներին՝ հիշյալ եղբայրները ձեռքերով եւ ոտքերով հարվածել են շտապօգնության ավտոմեքենային, բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, հայհոյանքներ եւ անպարկեշտ արտահայտություններ հնչեցնելով՝ տեւական ժամանակ խախտել են մարդկանց անդորրը, խաթարել երթեւեկության բնականոն ընթացքը: Այդ ընթացքում ոստիկանության ծառայողները հասարակական կարգը կոպիտ կերպով խախտող գործողությունները դադարեցնելու օրինական պահանջ են ներկայացրել, սակայն եղբայրները եւ քույրը, ոստիկանության ծառայողների նկատմամբ արհամարհական եւ կոպիտ վերաբերմունք դրսեւորելով, չեն ենթարկվել նրանց օրինական պահանջներին, որի ընթացքում, ոստիկանության աշխատակիցների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու նպատակով բռնություն են գործադրել նրանց նկատմամբ՝ հարվածելով վերջիններիս դեմքին, գլխին եւ ձեռքին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ երկու տղամարդկանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, իսկ կնոջը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՀՐԿԻԶԵԼ ԷՐ ՏԱՐԱԾՔԸ

Մարտի 1-ի գիշերը՝ ժամը 2:40-ին, 911 ծառայությունից ոստիկանության Վաղարշապատի բաժին հաղորդում էր ստացվել, որ Արմավիրի մարզի Ակնաշեն գյուղի տներից մեկի ավտոտնակում մեքենա է այրվում: Ոստիկանության Վաղարշապատի բաժնում հաղորդում տված քաղաքացին հայտնել էր, որ անհայտ պայմաններում այրվել են աներոջ ավտոտնակում կայանված «ՎԱԶ-2101» եւ «ԲՄՎ» մակնիշի մեքենաները:

Նախաձեռնվել էր քրեական վարույթ:

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի քրեական հետախույզները, ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ, պարզել էին, որ հրդեհից առաջ անհայտ անձը ապօրինի մուտք էր գործել նշված ավտոտնակ եւ գողացել թթվածնի բաքերի ռետինե խողովակներ, ավտոմեքենայի մարտկոցներ, նվագարկիչ, ձմեռային անվադողերի երթեւեկության շղթաներ, մեքենա բարձրացնելու սարքավորում եւ այլ գործիքներ:

Հետագա օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ավտոտնակից գողությունը կատարել էր Ոսկեհատ գյուղի 28-ամյա բնակիչը, ապա հետքերը թաքցնելու նպատակով հրկիզել էր տարածքը:

Նոյեմբերի 2-ին նա ձերբակալվել, տեղափոխվել է ոստիկանության Վաղարշապատի բաժին, որտեղ խոստովանել է արարքը եւ հայտնել, որ գողացած իրերի մի մասը իր տանն է:

28-ամյա երիտասարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Վաղարշապատի քննչական բաժին:

ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Նոյեմբերի 2-ին՝ ժամը 12:40-ի սահմաններում, ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, խուզարկությունների համար նախատեսված սենյակում անձնական զննության են ենթարկել կալանավորված անձ Ա. Հ.-ի մոտ երկարատեւ տեսակցության եկած կնոջը՝ Ե. Հ.-ին: Արդյունքում հայտնաբերել են վերջինիս մարմնում թաքցված, 28.26 գրամ քաշով պոլիէթիլենային փաթեթ՝ կանաչ զանգվածով:

Հայտնաբերվածն ուղարկվել է ՀՀ ՔԿ Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի եւ Անիի քննչական բաժին՝ քրեական վարույթ նախաձեռնելու համար:

ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ ԵՆ

ԳՈՐԾՈՎ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ԵՆ ԱՆՑՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ բացահայտվել են Երեւան-Մեղրի մայրուղով երթեւեկող բեռնատարների վարորդների կողմից ՀՀ ֆինանսական, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (ՔՏՀԱ), ինչպես նաեւ ոստիկանության պաշտոնատար անձանց 2023թ. հունվարից փետրվարն ընկած ժամանակահատվածում կատարած տալու բազմաթիվ դրվագներ:

Թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող բազմաթիվ գերբեռնված տրանսպորտային միջոցներ առանց կշռման եւ առանց խոչընդոտների անցել են Սիսիան համայնքի հատվածում տեղակայված ՔՏՀԱ տեսչական մարմնի անշարժ հենակետով եւ շարունակել երթեւեկությունը, որի հետեւանքով վնասվել է Երեւան-Մեղրի Մ-2 մայրուղու երթեւեկելի հատվածի ծածկույթը, ինչպես նաեւ չեն արձանագրվել վարորդների կողմից կատարված իրավախախտումները, եւ անձինք վարչական պատասխանատվության չեն ենթարկվել: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Հակակոռուպցիոն կոմիտեից: Մասնավորապես՝ քրեական վարույթով պարզվել է, որ 2023 թվականի հունվարի 20-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեսուչ Մ. Հ.-ն Երեւան-Մեղրի մայրուղու՝ Սիսիան համայնքի հատվածում տեղակայված ՔՏՀԱ տեսչական մարմնի անշարժ հենակետի տարածքում ծառայություն իրականացնելիս ՀՀ քաղաքացի Մ. Թ.-ից կաշառք է ստացել վերջինիս վարած գերբեռնված տրանսպորտային միջոցն առանց կշռման եւ առանց խոչընդոտների հենակետով անցկացնելու համար: ՔՏՀԱ տեսչական մարմնի պաշտոնատար անձ Գ. Հ.-ն էլ, ընդգրկված լինելով անշարժ հենակետի հերթափոխում եւ գտնվելով կշռման կետում, ՃՈ տեսուչ Մ. Հ.-ի դրդմամբ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, այն է՝ միջոցներ չի ձեռնարկել Մ. Թ.-ի վարած՝ պետական ավտոմոբիլային ճանապարհով թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող, գերբեռնված բեռնատարը կանգնեցնելու եւ կշռելու ուղղությամբ եւ, ըստ այդմ, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմել, որի արդյունքում Մ. Թ.-ն տուգանքի չի ենթարկվել: Նախաքննությամբ պարզվել է նաեւ, որ 2023 թվականի փետրվարի 20-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Սիսիանի բաժնի ՊՊԾ դասակի ոստիկան Հ. Բ.-ն ՔՏՀԱ տեսչական մարմնի վերը նշված նույն հենակետի տարածքում ծառայություն իրականացնելիս ՀՀ քաղաքացի Մ. Թ.-ի, ինչպես նաեւ ԻԻՀ երկու քաղաքացիների վարած՝ գերբեռնված տրանսպորտային միջոցներն առանց կշռման եւ առանց խոչընդոտների հենակետով անցկացնելու համար կաշառք է ստացել Մ. Թ.-ից, իսկ նույն դասակի ոստիկան Կ. Հ.-ն էլ դրդել է Մ. Թ.-ին նաեւ խմբով կաշառք տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի աշխատակցին: Քրեական վարույթով բացահայտվել են նաեւ վերը նշված եղանակով կաշառք տալու եւ ստանալու մի շարք այլ դրվագներ, որոնցով նախաքննությունը շարունակվում է: 10.10.2023թ. ՊՊԾ դասակի ոստիկաններ Հ. Բ.-ն եւ Կ. Հ-ն, ՃՈ տեսուչ Մ. Հ-ն, ՔՏՀԱ տեսչական մարմնի պաշտոնատար անձ Գ. Հ.-ն, ինչպես նաեւ բեռնատարի վարորդ Կ. Մ.-ն ձերբակալվել են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 2-ից 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 57 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՆՉ Է ՊԱՏԱՀԵԼ ԴՊՐՈՑՈՒՄ

Մոտ երկու շաբաթ առաջ արտակարգ դեպք է տեղի ունեցել Բերդ համայնքի սահմանամերձ Վերին Կարմիրաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցում: 8-րդ դասարանում անգլերեն լեզվի գրավոր աշխատանքի ժամանակ ուսուցուհի Ասյա Ավագյանն առանց հիմքի գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտուհուն կասկածել է գրավոր առաջադրանքի պատասխանները արտագրելու մեջ, գրավոր աշխատանքը խլել է աղջկանից, վիրավորական արտահայտություններ թույլ տվել նրա հասցեին: Խիստ վիրավորված աշակերտուհին թողել է դասարանը, արցունքն աչքերին՝ գնացել է իրենց տուն: Այդ միջադեպը քննարկվել է դպրոցի մանկավարժական խորհրդում, որտեղ Ասյա Ավագյանը հայտնել է, թե այդ աշակերտուհին եւ իր ծնողները պետք է իրենից ծնաչոք ներողություն խնդրեն: Այդ աղջիկը Բերդի նախկին զինկոմ, փոխգնդապետ Լեռնիկ Բաբայանի աղջիկն է, Լեռնիկը 2018-ի օգոստոսին վիրավորվել, ծնկից ներքեւ ոտքը կորցրել է Տավուշի սահմանագոտում: Մոտ 50 տարեկան, չամուսնացած ուսուցչուհի Ասյա Ավագյանը Երեւանի Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցի տնօրեն Անահիտ Խոսրովյանի մտերիմներից է: Վերին Կարմիրաղբյուրի դպրոցում կատարված դեպքի մասին տեղյակ է Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Մերուժան Հարությունյանը, սակայն դեպքից հետո նա միջոցներ չի ձեռնարկել: Կատարվածի մասին իրազեկ են նաեւ ԿԳՄՍ նախարարությունում: Բազում անգամ զանգահարել ենք Վ. Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոցի տնօրեն Նարինե Բուդուրյանին, սակայն նա այդպես էլ չպատասխանեց հեռախոսազանգերին: Վ. Կարմիրաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար Կամո Չոբանյանն ասաց, որ ինքը ուշացումով է իմացել այդ դեպքի մասին: Լեռնիկ Բաբայանը եւ իր կինը՝ Գայանեն, հաստատակամ են արդարության հասնելու գործում:

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՑ ԱՆՏԵՂՅԱԿ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել՝ նրան հարցելով, թե Տավուշի մարզում Արցախից բռնագաղթած քանի ընտանիք, քանի բնակիչ է հաստատվել, նրանցից քանիսի աշխատանքի տեղավորման խնդիրն է լուծվել: Մարզպետի պատասխանում նշված է. « 2023 թվականի հոկտեմբերի 10-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզում հաշվառվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված շուրջ 934 ընտանիք եւ 3607 անձ, որոնք տեղավորվել են մարզի Դիլիջան, Իջեւան, Բերդ եւ Նոյեմբերյան տարածաշրջաններում, իսկ աշխատանքի տեղավորման հետ կապված տեղեկատվություն ներկայումս չունենք»:

Այդ 3607 անձանց մեջ կան տարբեր ոլորտների մասնագետներ, ուստի մարզպետարանը պետք է գույքագրեր նրանց մասնագիտությունները, մարզի պետական ու մասնավոր ոլորտներում առկա թափուր աշխատատեղերը եւ աջակցեր բռնագաղթած արցախցիներին Տավուշում աշխատանքի տեղավորելու գործում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՐՈՇՎԵՑ

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾՆԵՐԸ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եւ ուղղորդման կարգը:

ԿԳՄՍՆ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ պարտադիր կրթությունից դուրս մնացած են համարվում 6-ից մինչեւ 19 տարին չլրացած՝ ՀՀ դպրոցներում, հանրակրթական հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա ուսումնարաններում եւ քոլեջներում չհաշվառված կամ հաշվառված, բայց մեկ ամսվա ընթացքում ամսվա համար գումարային հաշվարկով 10 աշխատանքային օրից ավելի չհաճախած անձինք:

Նկատի ունենալով, որ 12-ամյա հանրակրթության պարտադիր պահանջը, ինչպես նաեւ այն, որ հանրակրթության մեջ երեխաների ընդգրկվածության ցուցանիշները հիմք են հանդիսանում երկրի միջազգային տարբեր գնահատականների համար (մարդկային զարգացման համաթիվ, գլոբալ մրցունակության համաթիվ եւ այլն), կարեւոր է ունենալ կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եւ ուղղորդման (կրթության մեջ ներառման) գործուն համակարգ, որը հենված կլինի բոլոր շահագրգիռ եւ պատասխանատու կառույցների համագործակցության վրա:

Կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթության մեջ ներգրավման նպատակն է դպրոցահասակ երեխաների՝ կրթությունից դուրս մնալը կանխելը, ուսումնական հաստատությունից դուրս մնացած երեխաներին վաղ բացահայտելը, դուրս մնալու պատճառները վերհանելը եւ դրանց վերացման համար միջոցներ ձեռնարկելը, երեխայի ուսումնառությունը համապատասխան ուսումնական հաստատությունում ապահովելը:

Ուսումնական հաստատություն չհաճախած կամ այնտեղ հաշվառված չլինելու դեպքում պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց բացահայտելու համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր եւ հունվար ամիսներին, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի եւ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները, նախարարությանը ներկայացնում է 6-ից մինչեւ 19 տարին չլրացած այն անձանց տվյալները, որոնք որեւէ հաստատությունում հաշվառված չեն:

Եթե անձն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, համապատասխան փաստաթուղթ ներկայացված չլինելու պարագայում խնամակալության եւ հոգաբարձության մարմինը դիմում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնին: Վերջինս, տեղեկացնելով ծնողին (օրինական ներկայացուցչին), ապահովում է անձի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը եւ ուղղորդում է անձին ուսհաստատություն՝ սահմանված կարգով կրթությունը կազմակերպելու համար: Հաստատությունում կրթությունը կազմակերպվում է սահմանված կարգով: Բացված հայտերի մասին ամբողջ տեղեկատվությունը, պատմությունը եւ աշխատող կողմերի գործողությունները հասանելի են բոլոր շահագրգիռ եւ պատասխանատու կառույցներին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Արտաքին գործերի նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը անդրադարձավ ՌԴ Պետդումայի կողմից Հայաստանի քաղաքացիների ազգային վարորդական վկայականները ճանաչելու մասին օրինագծի հետաձգմանը:

«Ռուսաստանի կողմից այս հարցով իրենց խորհրդարանում քննարկման կասեցման վերաբերյալ ռուսական կողմից նշվեց, որ իրենք հետաքրքրություն չունեն այս հարցում: Մենք դեռեւս այս հարցով նրանց հետ քննարկում չենք ունեցել, այդպիսի առիթ չի եղել: Կփորձենք առաջիկա շփումների ընթացքում այս հարցը բարձրացնել եւ արձագանքել»,- «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին Ազգային ժողովի տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի, ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2024 թվականի պետբյուջեի նախնական քննարկմանն ասաց ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը:

ՌԴ Պետդուման որոշում է ընդունել անժամկետ հետաձգել Ռուսաստանում ձեռնարկատիրական եւ աշխատանքային գործունեություն իրականացնելիս Հայաստանի քաղաքացիների ազգային վարորդական վկայականները ճանաչելու մասին օրինագծի քննարկումը: Այն առաջին ընթերցմամբ ընդունվել էր 2022 թվականի հունիսին:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին հայտնի է Հայաստանի Հանրապետության շուրջ 200 քառ. կմ տարածք, որ այս պահին գտնվում է ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Արարատ Միրզոյանն այս մասին ասաց ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2024 թ. պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումներում:

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Քրիստինե Վարդանյանի հարցին, թե Հայաստանի Հանրապետության տարածքից քանի քառ. կմ տարածք է օկուպացված Ադրբեջանի կողմից, նախարար Միրզոյանը պատասխանեց.

«Մենք ունենք դեռ 1990-ականներից Հայաստանի Հանրապետության տարածք՝ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող: Նաեւ ունենք այս թարմ օրինակները. ինձ հայտնի է այդպիսի շուրջ 200 քառ. կմ ՀՀ տարածք, որոնք հիմա գտնվում են ադրբեջանական ուժերի ներքո»:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ճՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

Team

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ

Էլեկտրական մեքենաների օգտագործումը Հայաստանում խթանելու եւ հեշտացնելու նպատակով Team Telecom Armenia-ն մեկնարկել է Team Energy նախագիծը:

Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանցն արդեն հասանելի է ՀՀ ողջ տարածքում: Արագ եւ գերարագ լիցքավորող AC ու DC լիցքավորիչները էլեկտրական մեքենաների սիրահարներին կօգնեն իրենց ճամփորդությունը դարձնել ավելի հեշտ, անխոչընդոտ ու հաճելի:

«Team Energy-ն Team էկոհամակարգի այն նախագիծն է, որտեղ հատվում են հեռահաղորդակցությունը, տեխնոլոգիան եւ էկոլոգիան: Մեր բոլոր նախագծերում առաջարկում ենք լուծումներ, որոնք օգտակար կլինեն սպառողներին, իսկ երկարաժամկետ հեռանկարում կբերեն նաեւ մտածելակերպի փոփոխության: Teaշ Energy-ի զարգացումը նպաստելու է շրջակա միջավայրի համար էկոլոգիապես մաքուր մեքենաների ավելացմանը՝ զգալիորեն կրճատելով օդի աղտոտվածությունը եւ տրանսպորտային ծախսերը»,- նշում է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Կայանները նախատեսված են բոլոր տեսակի էլեկտրական մեքենաների լիցքավորման համար: Դրանք տեղադրված են Երեւանում, մարզերում, ինչպես նաեւ հիմնական եւ միջպետական նշանակություն ունեցող ճանապարհներին: Team Energy-ի գերարագ լիցքավորման DC կայանները ապահովում են մինչեւ 160 կՎ/ժամ հզորություն:

Team Energy հավելվածը հնարավորություն է տալիս գտնել մոտակա լիցքավորման կետերը, հեշտությամբ կատարել լիցքավորում եւ վճարել բանկային քարտի միջոցով, իսկ Team Telecom Armenia-ի բաժանորդ լինելու դեպքում՝ նաեւ Team-ի հեռախոսահամարի հաշվեկշռից:

Team Energy հավելվածը հասանելի է App store-ում եւ Play market-ում:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ, 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը, որը որակյալ ինտերնետով կապահովի Հայաստանի բոլոր մարզերը:

ԱՊԱՀՈՎՎԱԾ Է

ԹՎԱՅԻՆ ԱՐԴԻ ՄԻՔԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Հայաստանում բնակավայրերի 66 տոկոսն ապահովված է լայնաշերտ ինտերնետով, ՀՀ բնակչության 96 տոկոսը հնարավորություն ունի օգտվել ինտերնետից:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին նշեց ՀՀ ԲՏԱ նախարարի տեղակալ Ավետ Պողոսյանը Ինտերնետ կառավարման հայաստանյան 8-րդ համաժողովի շրջանակներում:

«Կառավարությունն իր ուշադրության կենտրոնում է պահում ՀՀ բնակավայրերը օպտիկամանրաթելային լայնաշերտ ինտերնետով ապահովելու ծրագիրը, եւ կառավարության 2021-2026 թվականների ծրագրում առկա է կետ՝ բնակավայրերի մինչեւ 80 տոկոսը մինչեւ 2026 թվականը օպտիկամանրաթելային լայնաշերտ ինտերնետով ապահովելու վերաբերյալ: Այս միջոցառման նպատակը այդ հարցի շուրջ մասնագետներին համախմբելն եւ լուծումներ գտնելն է»,- ասաց նախարարի տեղակալը:

Նրա համոզմամբ՝ մինչեւ 2026 թվականը Հայաստանի բնակավայրերի 80 տոկոսը ապահովված կլինի լայնաշերտ ինտերնետով (օպտիկամանրաթելային):

«Այս պահին բնակավայրերի 66 տոկոսն արդեն իսկ ապահովված է օպտիկամանրաթելային լայնաշերտ ինտերնետով, միեւնույն ժամանակ ուզում եմ նշել, որ բնակչության 96 տոկոսը հնարավորություն ունի օգտվելու լայնաշերտ ինտերնետից: Մենք խոսում ենք շատ հեռավոր, փոքր բնակչություն ունեցող բնակավայրերի մասին, որտեղ ներդրումներ անելը տնտեսական առումով նպատակահարմար չէ: Այս դեպքում լուծումը տեսնում եմ սուբսիդավորման կամ օպերատորներին շահագրգռելու մեջ, որպեսզի այդ բնակավայրերում ինտերնետ հասանելիություն ապահովեն: Մենք այս պահին ունենք գործիքակազմ. կառավարությունը պատրաստ է սուբսիդավորել այն համայնքներին, որոնք նման հայտ կներկայացնեն: Այս պահի դրությամբ համայնքներից որեւէ մեկը հայտ չի ներկայացրել, ինչը նշանակում է, որ ինտերնետ հասանելիությունը բավականին լավ վիճակում է գտնվում»,- նշեց Պողոսյանը:

Նրա համոզմամբ՝ այս պահին ինտերնետ հասանելիության առումով Հայաստանը առաջատար դիրքեր է զբաղեցնում: Նման կարծիք հայտնեց նաեւ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը:

Արշակյանն ընդգծեց, որ Հայաստանը, հաշվի առնելով բոլոր հանգամանքները, չափազանց կարեւորում է համայնքներում ինտերնետի հասանելիությունը:

ՀՀ ԲՏԱ նախարար Ռոբերտ Խաչատրյանը նշեց՝ համաժողովի շրջանակում մշտապես քննարկվում են ինտերնետի կառավարմանը վերաբերող արդիական հարցեր, ինչպես, օրինակ, ինտերնետի զարգացման հնարավորությունները, ռիսկերին դիմակայելու ճանապարհները, համընդհանուր լուծումների մշակումը եւ այլն: Նա կարեւորեց, որ քննարկումներում ներգրավված են պետական, հասարակական, մասնավոր հատվածների ներկայացուցիչներ, որոնք խնդիրը եւ խնդրին ուղղված լուծումները դիտարկում են տարբեր տեսանկյուններից եւ բերում համակողմանի լուծումների:

Նրա խոսքով՝ այս նպատակին հասնելու համար Կառավարության հնգամյա ծրագրում հստակ նախանշված են միջոցառումներ, ինչպիսիք են՝ նույնականացման արդիական համակարգի ներդրում, հանրային ծառայությունների թվայնացում, դրանց առցանց հասանելիության ապահովում, բնակչության թվային գրագիտության բարձրացում եւ թվային գործիքների կիրառման խթանում, իրավաբանական անձանց եւ քաղաքացիների հետ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների՝ էլեկտրոնային եղանակով հաղորդակցության ապահովում եւ մի շարք այլ ծրագրեր:

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՔՈՑՆԵՐ՝ ԵՄ-ԻՑ

Հայաստանը 2024 թվականին Եվրամիությունից ակնկալում է ստանալ 17,9 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհային միջոցներ:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին Ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի, ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2024 թվականի պետբյուջեի նախնական քննարկմանը ասել է ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

Նրա խոսքով՝նախատեսվում են երեք հիմնական ուղղություններ:

«Առաջինը Հայաստանում դատական ոլորտի բարեփոխումների իրականացումն է, որը բյուջետային աջակցության դրամաշնորհ է: Այս ծրագիրը կար նաեւ 2023 թվականին 2,7 մլն եվրոյի չափով, իսկ 2024 թվականին նախատեսվում է 5,4 մլն եվրոյի չափով, հաջորդը՝ «Աջակցություն Հայաստանի դատական ոլորտի բարեփոխումներին. փուլ- 2», որը հավելյալ 2,5 մլն եվրո է»,-մանրամասնել է Հովհաննիսյանը:

Նա հավելել է, որ 2024 թվականի համար նախատեսվում է նաեւ Հայաստանում ԵՄ աջակցության նախագիծ կրթության ոլորտին՝ 10 մլն եվրոյի չափով: Ըստ նախարարի՝ ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 32 մլն եվրո, որից 29,3 մլն եվրոն ուղղակի բյուջետային աջակցություն է, իսկ մնացածը՝ տեխնիկական:

Անդրադառնալով վարկային միջոցներին՝ ֆինանսական գերատեսչության ղեկավարը մանրամասնել է, որ 2024 թվականի վարկերը կազմում են 21 մլրդ դրամ, որից 153 մլն-ը՝ ընթացիկ ծախսերով, եւ 21 մլրդ 62 մլն-ը՝ կապիտալ:

«Հիմնական մասը, որը կազմում է 18,8 մլրդ դրամ, իրականացվում է ՏԿԵ նախարարության միջոցով՝ ուղղված ոռոգման համակարգի թարմացմանը, կոշտ թափոնների կառավարմանը, ճանապարհային ցանցի բարելավմանը, ջրամատակարարման եւ ջրահեռացման բարելավմանը, քաղաքային զարգացմանն ուղղված ծրագրերին, ինչպես նաեւ կա ՊԵԿ-ի կողմից իրականացվող ծրագիր, որը վերաբերում է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկային ծրագրին, որի վարկային միջոցներն ընդհանուր առմամբ կազմում են 2 մլրդ 290 մլն դրամ»,-ներկայացրել է նախարարը՝ հավելելով, որ նախատեսված են նաեւ այլ դրամաշնորհային միջոցներ տարբեր ուղղություններով՝ ոռոգման համակարգ, կոշտ թափոնների կառավարում, գյուղատնտեսական ծրագրերի խթանման, գյուղական ենթակառուցվածքների վերականգնման եւ զարգացման ծրագրեր: Ընդհանուր դրամաշնորհային գումարը կազմում է 9 մլրդ 760 մլն դրամ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԱՄԵՆԱՄՅԱ

ԿՆԵՐԿԱՅԱՆԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ռուսական լավագույն ռոմանսներն ու հայ կոմպոզիտորների սիրված ստեղծագործությունները հնչեցին «Հայկական Ռոմանսիադա» 4-րդ ամենամյա մրցույթի ընթացքում: «Ռոմանսիադա» ռուսական ռոմանսի երիտասարդ կատարողների միջազգային մրցույթի հայաստանյան փուլը կազմակերպել էին Ռուսական ռոմանսի պահպանման «Ռոմանսիադա» բարեգործական հիմնադրամը, Երեւանում «Դոմ Մոսկվի» մոսկովյան մշակութագործարարական կենտրոնը՝ Հայաստանի երաժշտական ընկերության, Մոսկվայի կառավարության, Մոսկվայի արտաքին տնտեսական եւ միջազգային կապերի դեպարտամենտի եւ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Մրցույթի նպատակն է որպես երաժշտական ուղղություն տարածել ռուսական ռոմանսի մշակույթն ու զարգացնել ավանդույթները, բացահայտել եւ աջակցել երիտասարդ տաղանդավոր արտիստներին եւ կատարողներին:

Այս տարի մրցակցությունը թեժ էր, մասնակցում էին հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի, «Կապելա» ազգային ակադեմիական երգչախմբի, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի եւ Օպերայի եւ բալետի ազգային թատրոնի «Երիտասարդական օպերային ծրագրի» մենակատարները: Մասնակիցները ցուցադրեցին ռոմանսի կատարման տարբեր ոճեր՝ ակադեմիականից մինչեւ ժամանակակից:

«Հայկական ռոմանսիադա» մրցույթի ժյուրիի կազմում էին ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Կոնսերվատորիայի, Չարենցավանի Ա? Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի ներկայացուցիչներ:

«Հայ կատարողներն ամեն անգամ զարմացնում են՝ ցուցադրելով անհավանական բարձր մակարդակ: Այս տարին բացառություն չէր, մեզ համար շատ դժվար էր ընտրել հաղթողին», - նշեց ժյուրիի համանախագահ, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, «Ռոմանսիադա» մրցույթի հիմնադիր Գալինա Պրեոբրաժենսկայան:

Մրցութային երկու փուլերի արդյունքում մրցանակակիրներ դարձան Մերի Միսակյանը եւ Կարինե Աղաջանյանը (3-րդ տեղ), Արփի Սինանյանը եւ Հովհաննես Օրդանյանը (2-րդ տեղ), Ռիտա Պետրոսյանը եւ Ֆերդինանդ Մուրադյանը (1-ին տեղ):

Հատկանշական է, որ «Հայկական ռոմանսիադա» մրցույթը ոչ միայն օգնում է տաղանդավոր կատարողներին, այլեւ նպաստում է ազգային ռոմանսի պահպանմանն ու հանրահռչակմանը: Նախորեին «Դոմ Մոսկվի» կենտրոնում տեղի ունեցավ «Հայ կոմպոզիտորների ռոմանսներն ու երգերը. ընտրանի» հավաքածուի շնորհանդեսը:

Նախագծի հեղինակը եւ ժողովածուի կազմողը Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, Կոնսերվատորիայի պրոֆեսոր Դավիթ Ղազարյանն է: Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնի աջակցությամբ տպագրված հավաքածուում տեղ են գտել հասարակությանը քիչ ծանոթ բացառիկ երաժշտական աշխատանքներ, որոնք կարեւոր արժեք են պահպանման եւ սերունդներին փոխանցման համար: Նախագծի նպատակն է նպաստել ազգային երաժշտության պահպանմանը՝ ներկայացնելով արվեստի հայ երախտավորներին ու նրանց ստեղծագործությունները:

ՍՊՈՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀԱՂԹԵՑ

Մեծ Բրիտանիայի Մեն կղզում շարունակվում է ՖԻԴԵ-ի «Գրանդ Սվիս» մրցաշարը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Հայաստանը ներկայացնող շախմատիստներից 8-րդ տուրում Շանթ Սարգսյանը սեւ խաղաքարերով պարտության մատնեց ադրբեջանցի գրոսմայստեր Նիջաթ Աբասովին: Մանուել Պետրոսյանի, Գաբրիել Սարգսյանի, Հրանտ Մելքումյանի եւ Հայկ Մարտիրոսյանի խաղերն ավարտվեցին ոչ-ոքի արդյունքով:

8-րդ խաղափուլից հետո Սամվել Տեր-Սահակյանը, Շանթ Սարգսյանը եւ Մանուել Պետրոսյանը ունեն 4.5 միավոր, Հրանտ Մելքումյանը եւ Գաբրիել Սարգսյանը՝ 4 միավոր, Հայկ Մարտիրոսյանը՝ 3.5 միավոր:

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին առաջատար, այժմ ԱՄՆ դրոշի ներքո հանդես եկող Լեւոն Արոնյանը ոչ-ոքի է ավարտել պարտիան: Կանանց մրցաշարում Էլինա Դանիելյանն ու Մարիամ Մկրտչյանը ունեն 3 միավոր:

ԿՄԱՄՆԱԿՑԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի սամբոյի հավաքականը ընդլայնված կազմով կմասնակցի Երեւանում կայանալիք աշխարհի առաջնությանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ վերջին ուսումնամարզական հավաքից հետո ընտրանիների կազմում ընդգրկված են հետեւյալ սամբիստները.

58 կգ՝ Տիգրան Կիրակոսյան
64 կգ՝Նարեկ Դալլաքյան
71 կգ՝ Արամ Աղաջանյան
79 կգ՝ Բորիս Շատվերյան
88 կգ՝ Վահագն Չալյան
98 կգ՝ Արսեն Խանջյան
Գերծանր՝ Հակոբ Առաքելյան

Մարտական սամբո.

58 կգ՝ Մխիթար Մխիթարյան
64 կգ՝ Վահրամ Գրիգորյան
71 կգ՝ Վաչիկ Վարդանյան
79 կգ՝ Սարգիս Վարդանյան
88 կգ՝ Ավետիք Պողոսյան
98 կգ՝ Արման Ավանիսյան

Աղջիկներ թիմ.

50 կգ՝ Արփինե Մնացականյան
54 կգ՝ Վարսիկ Գրիգորյան
59 կգ՝ Մելինե Մամիկոնյան
65 կգ՝ Մարինա Մարտիրոսյան
80 կգ՝ Նելլի Ավետիսյան
Գերծանր՝ Աննա Մկրտչյան:

Սամբոյի մեծահասակների աշխարհի 2023 թվականի առաջնությունը կանցկացվի նոյեմբերի 10-12-ը Երեւանում:

ՀԱՅՏՆԻ Է ԿԱՋՄԸ

Հայաստանի ծանրամարտի երիտասարդական ընտրանին աշխարհի առաջնությանը կմասնակցի ընդհանուր առմամբ 7 մարզիկով:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Մեքսիկայի Գվադալախարա քաղաքում կայանալիք աշխարհի առաջնությանը կմասնակցեն Գոռ Սահակյանը (67 կգ), Մարտին Պողոսյանը (73 կգ), Սուրեն Գրիգորյանը (89 կգ), Գարիկ Կարապետյանը (102 կգ), Ալեքսանդրա Գրիգորյանը (55 կգ), Աննա Ամրոյանը (76 կգ), Էմմա Պողոսյանը (81 կգ):

Աշխարհի առաջնությունը կմեկնարկի նոյեմբերի 15-ին, կեզրափակվի 23-ին:

ՀԱՅՏՆԵՑ

ՄՇԱԿՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ Է

Ջոն Ուիքի «տիեզերքն» ընդլայնվում է՝ ֆիլմից վերածվելով սերիալի: Collider-ին տված հարցազրույցում ռեժիսոր Չադ Ստահելսկին հաստատել է, որ եւս մեկ սերիալ է սպասվում:

Ինչ վերաբերում է 4 մասից բաղկացած ֆիլմաշարին, հաջորդ ամառ էկրաններին կհայտնվի Անա դե Արմասի մասնակցությամբ սփին-օֆֆը: Երկրպագուներին դուր է եկել նաեւ «Կոնտինենտալ» պրիքվելը, որը ներկայացնում է Նյու Յորքի հայտնի՝Continental հյուրանոցի սեփականատեր Ուինսթոն Սքոթի՝ իշխանության գալու պատմությունը:

Ըստ Ստահելսկու՝ կան մի շարք գաղափարներ, որոնց վրա ներկայումս աշխատում են մի խումբ սցենարիստներ: «Դրանք բոլորը հիանալի գաղափարներ են, եւ ես մտքեր ունեմ, թե ինչպես դրանք իրականացնել: Մենք Ջոն Ուիքի մասին հեռուստատեսային շոու ենք անում, ինչը նոր մտահղացումներ է տալիս»,- նշել է նա:

ՎԻՃԱԿԸ՝ ՎԹԱՐԻՑ ՀԵՏՈ

Երգչուհի Ալլա Լեւոնյանը վթարի է ենթարկվել:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ նոյեմբերի 2-ին ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 22:20-ի սահմաններում Աբովյան պուրակում բախվել են Երեւանի բնակիչներ, 48-ամյա Ալլա Լեւոնյանի վարած Toyota Highlander մակնիշի ավտոմեքենան եւ 40-ամյա Արթուր Գեւորգյանի վարած Zhongtong մակնիշի ավտոբուսը:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով 1 հոգի տեղափոխվել է Թիվ 1 համալսարանական հիվանդանոց:

Վարորդները ենթարկվել են սթափության փորձաքննության, եղել են սթափ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում երգչուհին հայտնեց, որ ամեն բան կարգին է, փոքրիկ միջադեպ է եղել, որի հետեւանքով, փառք Աստծո, ոչ մեկ չի տուժել:

«Ամեն բան կարգին է, ես լավ եմ, շնորհակալություն»:

Ինչ վերաբերում է հիվանդանոց տեղափոխված անձին, Ալլան նշեց, որ նրա վիճակը եւս լավ է, պարզապես կտրուկ արգելակելու ժամանակ ավտոբուսի մեջ կինը ընկել է, բնականաբար պետք է տեղափոխեին հիվանդանոց: Բարեբախտաբար հնարավորինս շուտ տուն է հասել, քանի որ լուրջ բան չի եղել:

Հավելենք, որ Լեւոնյանը ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում պարզաբանել է.

«Քանի որ ստանում եմ բազմաթիվ զանգեր, որոշեցի այս տարբերակով գրել...

Սիրելի՛ ընկերներ, հարազատներ, հետեւորդներ, համացանցում քիչ առաջ տարածվել է նյութ՝ավտովթարի մասին՝իմ մասնակցությամբ...

Շնորհակալ եմ անհանգստության համար:

Փառք Աստծո, փոքրիկ միջադեպ էր, ոչ ոք չի տուժել, ամեն բան կարգին է»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

● *Նոյեմբերի 5-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Ցիլինդր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Քոլեջի շրջանավարտը կարո՞ղ է ուսումը շարունակել բուհի 2-րդ կուրսում:

Միլվա Հունանյան
(39 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հուլիսի 8-ի N 752-Ն որոշմամբ: Հավակնորդների կրթությունը բուհում կազմակերպվում է հետեւյալ կերպ՝ մինչեւ 2014 թվականը ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած եւ նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը, իսկ հետագա ժամանակաշրջանում ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած եւ նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը:

Առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամաքանակների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 եւ ավելի տոկոս կազմող տարբերությունը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ հավակնորդը կամ քոլեջը համապատասխան փաստաթղթերը ներկայացնում է բուհ մինչեւ տվյալ տարվա օգոստոսի 30-ը: Հատկացված տեղերից ավելի դիմումների դեպքում սահմանված կարգով անցկացվում է մրցույթ:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ բանի օրինակից է կնքվում ստորագրությունների իսկության ճանաչմամբ կնքվող պայմանագիրը:

Լուսինե Միքայելյան (32 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ ստորագրությունների իսկության ճանաչման նպատակով ներկայացվող պայմանագիրը ստորագրվում եւ ընդունվում է պետական գրանցման մեկ օրինակից, որը համարվում է այդ պայմանագրի բնօրինակը եւ պահպանվում է տվյալ անշարժ գույքի միավորի համար կազմված կադաստրային գործում:

Պայմանագրի կողմի դիմումի հիման վրա՝ նրան տրամադրվում է պետական գրանցման ընդունված պայմանագրի պատճենը՝ հաստատված Կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակի կնիքով: Նման կարգով տրամադրված պատճենը եւ անշարժ գույքի ռեգիստրում պահպանվող պայմանագրի բնօրինակն ունեն հավասար իրավաբանական ուժ:

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակներում անշարժ գույքի գործարքները կարող են կնքվել միայն ՀՀ կառավարության կողմից հաստատված օրինակելի պայմանագրերի հիման վրա: Եթե կողմերին անհրաժեշտ է ներառել լրացուցիչ պայմաններ, որոնք նախատեսված չեն օրինակելի պայմանագրերում, ապա նման դեպքում գործարքը կպահանջի նոտարական վավերացում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայտնի է նոյեմբերի 10-12-ը Երեւանում կայանալիք սամբոյի աշխարհի առաջնության խորհրդանիշը՝ Տարուն:

Հայկական հավատալիքներում արջն ուժի, ինքնաբուժության եւ պաշտամունքի առարկա է եղել: Առասպելներից մեկի համաձայն՝ հայոց լեռներում եղել է կենարար ուժը տասնապատկող «Արջի աղբյուր» անունով մի լիճ: Աղբյուրը հսկել է Տարու անունով արջը, որի բացարձակ ուժը թույլ էր տալիս ճեղքելու ցանկացած ապառաժ ու ժայռ: Տարուն թույլ չէր տալիս որեւէ մեկին մոտենալ ջրին, որպեսզի այդ ուժը հանկարծ չզորացներ չարին: Ասում են՝ մի անգամ մի ճամփորդի հաջողվում է գտնել Արջի աղբյուրը, բայց Տարուին հաղթել նա չի կարողանում: Արկածախնդիր ճամփորդը շուտով դառնում է Տարուի աշակերտը՝ նրանից սովորելով ուժի իրական աղբյուրը: Տարիներ անց ճամփորդը իջնում է լեռներից եւ սկսում աշխարհով մեկ տարածել Տարու արջի պայքարի արվեստը՝ մեզ հայտնի որպես «սամբո»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 8 +12 + 16
Կոտայքի լեռներ	+ 4 + 8 +12 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 11 +16 + 20
Գեղարքունիք	+ 3 + 7 + 8 + 13
Լոռի	+ 8 + 13 +18 + 23
Տավուշ	+ 10 + 15 +20 + 25
Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 9 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 10 + 18 + 21

Արարատ	+ 9 + 12 +22 + 24
Արմավիր	+ 8 + 10 +21 + 23
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 6 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +21 + 23
Սյունիքի հովիտներ	+14 + 18 +21 + 25
Սյունիքի նախալեռներ	+ 7 + 12 +17 + 21
ԼՂՀ	+ 9 + 12 +23 + 25
Երեւան	+ 9 + 11 +22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 2.11.2023
Հասցեն՝ Գերադրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*